



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

№ 33-Ա

«26» ապրիլի 2017թ.

2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍ ԱՄՍԿԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՈՒ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՆԵՐԸ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կրթության պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի աշխատանքային ծրագիրը՝

Կարգադրում եմ.

1. Հաստատել ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի մայիս ամսվա ստուգումների ժամանակացույցը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հրապարակել ՀՀ կրթության պետական տեսչության 2017 թվականի մայիս ամսվա ստուգումների և գործողությունների ժամանակացույցները՝ համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

ՀՀ կրթության գլխավոր պետական տեսուչ՝

Ա. Կարապետյան

2017Թ. ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

h/h	Ստուգվող սուբյեկտի անվանումը	Ստուգման ժամկետները
1.	Տեսչավորումներ ՀՀ Արագածոտնի մարզի Արագածի, ՀՀ Տավուշի մարզի Բերդի արհեստագործական պետական ուսումնարաններում	I, II տասնօրյակներ
2.	Ստուգումներ ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդ, Չարենցավան քաղաքների թվով 6 նախադպրոցական ուսումնական հաստատություններում	I, II տասնօրյակներ
3.	Թեմատիկ ստուգում Հայաստանի Հանրապետության ռուսաց լեզվով ուսուցմամբ դասարաններ ունեցող դպրոցներում	I, II, III տասնօրյակներ

Հավելված 2

ՀՀ կրթության պետական տեսչության պետի
2017 թվականի ապրիլի 26-ի N 33-Ա կարգադրության

2017Թ. ՄԱՅԻՍ ԱՄՍՎԱ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

N	Գործողության անվանումը	Կատարման պատասխանատուն	Կատարման ժամկետը
1.	ՀՀ Տավուշի մարզի թվով 27 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված կրթական գործընթացի ուսումնասիրությունների արդյունքների արտագնա քննարկում	ՎԳԲ	II տասնօրյակ
2.	ՀՀ Կոտայքի մարզի Եղվարդի, Չարենցավանի քաղաքապետարանների կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում ուսումնասիրություններ	Ուսումնասիրություն իրականացնող խմբեր	I, II տասնօրյակներ
3.	Դիմումներում և բողոքներում, ահազանգերում բարձրացված խնդիրների ուսումնասիրություն կամ ստուգում	Կառուցվածքային ստորաբաժանումներ	I, II, III տասնօրյակներ